

Գիրքը լուսապատճենահանվել է
"Համահայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից և ներկայացվում է իր
այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՂՈՒՔ ՆՈՒՅՆՂԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՏԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ
ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱԸԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ
ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

www.freebooks.do.am

ՀՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՍԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՍԵՉ freebooks@rambler.ru

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՈՎ

ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՐ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՆԿԱՐԱՆ-ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՋՈՎ ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ**

Մատենաշար

ՅՈՒՐԻ ԲԱՐՍԵՂՈՎ (իրավագիտության դոկտոր, միջազգային
իրավունքի պրոֆեսոր)

**ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՅՈՒԹԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**
(ռեպարացիայի և փոխհատուցման խնդիրներ)

Երևան, 1999թ., 33 էջ

Խմբագիր՝ Լ.Ա. Բարսեղյան

Մատենաշարի նպատակն է Հայոց ցեղասպանության թանգա-
րանի այցելուներին ծանոթացնել 20-րդ դարի առաջին ցեղա-
սպանության հետևանքով հայ ժողովրդի կրած կորուստների
մասին

Ֆիզիկական անձանց քրեական պատասխանատվության և պետության քաղաքական պատասխանատվության հետ մեկտեղ, որպես ցեղասպանության օբյեկտ դարձած ժողովրդին կառավարելու իրավունքից զրկում, միջազգային իրավունքն այդ հանցագործության կատարման հետ է կապում նաև նյութական պատասխանատվության կրումը որպես ունեցվածքի վերադարձում և սեփականության այլ իրավունքների վերականգնում (ռեստիտուցիա), վնասների և կորուստների փոխհատուցում (ռեպարացիա տուկոսի համարժեքով և հավելումով), նաև թե՛ ֆիզիկական անձանց, թե՛ ամբողջ ազգային խմբին պատճառած բարոյական վնասի հատուցումը տնտեսական գնահատումով:

Նյութական պատասխանատվության սահմանումը պայմանավորված է ոչ միայն արդարացիության, ունեցվածքային և սեփականության այլև այլ խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությամբ: Ցեղասպանության համար նյութական պատասխանատվության իրավական իմաստն այն է, որ գոյության միջոցներից՝ աշխատանքի գործիքներից, շարժական և անշարժ կայքից, այդ թվում՝ հողը, կացարանը և այլն, բռնի զրկմամբ պայմաններ են ստեղծվում ազգային խմբի քայքայման համար, ինչը և հանդիսանում է ցեղասպանության հանցակազմ, ուստի հակազդումն այդ հանցանքին ենթադրում է, նախ՝ խախտված իրավունքների վերականգնում, ապա համապատասխան պատժամիջոցների կիրառում հանցանքը գործողների դեմ: Բոլորը, ովքեր մասնակցել են այդ գործողություններին՝ մասնավոր անձինք, պետություն կազմող ժողովուրդը և պետությունն ինքնին, ենթակա են տնտեսական պատժամիջոցի գործողությանը: Նյութական պատասխանատվություն պիտի կրեն նաև օտար պետությունները, բանկերը և մասնավոր անձինք, ովքեր յուրացրել են ցեղասպանության օբյեկտ դարձած

ժողովրդի կողոպտման պատուները:

Թե ինչպես պիտի լուծվեն այդ հարցերը, օրինակ կարող են հանդիսանալ ներկայումս հրեական կազմակերպությունների ձեռնարկած միջոցները, ԱՄՆ պետդեպարտամենտի ամենաակտիվ և անմիջական օգնությամբ, հոլոկոստի հրեա-զոհերի՝ շվեյցարական բանկերում պահվող չպահանջված գումարների վերաբերյալ, ինչպես նաև ուրիշ սեփականության՝ տերերին վերադարձնելուն ուղղված միջոցները, ներառյալ նրանց պատկանող գեղարվեստական արժեքները, որոնք գտնվում են աշխարհի տարբեր թանգարաններում:

Թեև ցեղասպանության արդյունքում հայերին հասցված նյութական վնասի հատուցման հարցը շատ ավելի վաղ է ծագել, մի շարք պատճառներով չի լուծվել: Ամենևին էլ ոչ բոլորն են նույնիսկ պատկերացնում հարկ եղած փոխհատուցման ծավալները:

ՕՍՍԱՆՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ՝ ՀԱՅԵՐԻՆ ԿՈՂՈՊՏԵԼՈՒ ԵՎ ՍՊԱՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ

Հայ ազգաբնակչությանը գոյության միջոցներից նպատակառոտորված զրկելու խնդրով զբաղվում էր հենց թրքական պետությունը: Հայերի ցեղասպանության առաջին փուլում՝ 1878-1915թ.թ., նպատակային զանգվածային տեղահանության կազմակերպմամբ պետությունը նաև կազմակերպեց հայերի կողոպուտն ամենուրեք թուրքերի և քրդերի կողմից, ապահովելով նրանց անպատժելիությունը: Իսկ երբ Օսմանյան կայսրության կառավարությունը 1915թ. անցավ հպատակ-հայերի գլխովին բնաջնջմանը երկրով մեկ և նրանց կողոպտումն իրագործել սկսեց ամբողջ պետության մասշտաբով, թուրքական ամբողջ բնակչության մասնակցությամբ, ապա նա ընդունեց կանոնավորման հատուկ միջոցներ, որպեսզի մի կողմից օրինականության երևույթ ստեղծվի, մյուս կողմից ավարի նշանակալի մասն իրեն ապահովի:

Ամբողջ մի ժողովուրդ կողոպտելու համար պետք էր հայերի ունեցվածքը դարձնել տիրազուրկ: Այդ նպատակով 1915թ. մայիսի 26-ին (նոր տոմարով) Օսմանյան կայսրության ներքին

գործերի մինիստրն իր հուշագրով մեծ վեզիրին առաջարկեց Կաբինետի կողմից ընդունել ազգաբնակչության տեղահանումը թույլատրող օրենք: Մայիսի 29-ին մեծ վեզիրը հավանություն տվեց առաջարկությանը, նույնիսկ նախքան Կաբինետի ընդունելը, որը կայացավ հաջորդ օրը՝ մայիսի 30-ին, բայց արդեն մինչ այդ, մայիսի 27-ին մամուլի միջոցով հայտարարվեց տեղահանման մասին ժամանակավոր օրենքի ստեղծումը: Պատկանում էր «օրենքը» չընդունեց, թեև դա էր պահանջում Սահմանադրության 36-րդ հոդվածը: Թուրքական պաշտոնական պատմագրության վարկածի համաձայն, խորհրդարանը «համաձայնել է 1915թ. սեպտեմբերի 15-ին:

Իրավական ուժ չստացած տեղահանման մասին այդ ժամանակավոր օրենքի հիման վրա արդեն 1915թ. հունիսի 10-ին մտցվեց լրացուցիչ օրենք, որը ցուցումներ էր բովանդակում «պատերազմի և քաղաքական արտակարգ պայմանների հետևանքով տեղահանված հայերի թողած շարժական և անշարժ կայքի» հետ վարվելու մասին: Հայկական ամբողջ ունեցվածքը հայտարարվեց «լքյալ» և կալանք դրվեց դրա վրա: Նախատեսվում էր հատուկ կոմիտեների ստեղծում, որոնց վրա կդրվեին «լքյալ» սեփականության հաշվառումը և դրա հուսալի պահպանումը սեփականատերերի անունով: Անասունը և սլահպանման ոչ ենթակա այլ ունեցվածքը պիտի վաճառվեր հանրային աճուրդով, ստացված գումարները պիտի պահվեին սեփականատերերի հաշիվներում, իբր վերադառնալուց հետո նրանց հանձնելու համար: Նախատեսվում էր նաև, որ հայերի տները և հողերը, համապատասխան արձանագրմամբ, ենթակա էին հանձնելու Բալկանյան պատերազմի ժամանակ քոչած թուրք փախստականներին: Հանձնվում էին շինություններ, տներ, ձիթենու պլանտացիաներ, խաղողի այգիներ և այլն, իսկ թուրք փախստականներին բաժանելուց հետո մնացած ունեցվածքը ենակա էր հանրային աճուրդով վաճառվելու, ստացված գումարները սեփականատերերի հաշիվների վրա գրառելով:

1915թ. սեպտեմբերի 13/26/-ին ժամանակավոր օրենք ընդունվեց ունեզրկման և բռնագրավման մասին, որով սահմանվում էր տեղահանվածների «լքյալ» ունեցվածքի, նրանց բանկա

յին հաշիվների և ավարների նկատմամբ **հայտերի արձանագրու-
ման և քննման կարգը**: Այս օրենքի **հրապարակայնորեն քննար-
կվեց Սենատում**, քայց դարձյալ կիրարկվեց **Սահմանադրության**
խախտմամբ, առանց խորհրդարանի քննարկման:

Դեռևս այդ փաստաթղթերի ընդունման **ժամանակ հայե-
րի ունեցվածքի և սեփականության «լքյալ» բնորոշման «ամօրի-
նականությունը»** հենց բուն թուրքիայում էր ճանաչվում, քանի
որ հայերը կամավորապես չէին հրաժարվել իրենց ունեցված-
քից: Բողոքելով հայերի ունեցվածքի վաճառքի դեմ, սենատոր
Ռիզան հայտարարել էր. «Ոչ ոք իրավունք չունի վաճառել իմ ու-
նեցվածքը, եթե ես չեմ կամենում: Դա արգելված է Սահմանա-
դրության 21-րդ հոդվածով: Եթե մենք սահմանադրական ռեժիմ
ունենք, որը գործում է սահմանադրական իրավունքին համա-
պատասխան, դա անել չենք կարող: Կամայականություն է:
Բռնել ինձ, դուրս քշել իմ գյուղից, հետո ևյ վաճառել իմ
ունեցվածքը և սեփականությունը, սմամ բան երբեք չի կարող
թույլատրվել: Դա չի կարող թույլ տալ ոչ գիտակցությունը, ոչ
օսմանյան իրավունքը»:

1915թ. **ժամանակավոր օրենքի ընդունման** մասին հայտ-
նելով **Գերմանիայի արտաքին գործոց միմիստրությանը**, Deutsche Bank-ի տնօրեն **Արուր Ֆոն Կվիմմերը** նշել է, որ օրենքի
տասնմեկ հոդվածների **րովանդակությունը** համգում է տեղա-
հանված հայերի **ամբողջ ունեցվածքի բռնագավթմանը** և կառա-
վարության **իրավունքի հաստատմանը՝ իր հայեցողությամբ**
տնօրինելու հայերի **հաշիվներում եղած գումարները**:

Չորս տարի անց՝ 1918թ. նոյեմբերի 4-ին, երբ թուրքիան
պարտություն կրեց պատերազմում և երիտթուրքական կառա-
վարության անդամները փախչում էին երկրից, Օսմանյան կայս-
րության խորհրդարանը այդ փաստաթուղթը ճանաչեց ոչ սահ-
մանադրական, իրավական առումով անվավեր:

ԻՆՉՊԵՍ ԷՐ ԿԱՏԱՐՎՈՒՄ ՄԻ ԱՄԲՈՂՁ ԺՈՂՈՎՐԴԻ
ԿՈՂՈՊՈՒՏԸ

Թե ինչպես էր կատարվում ցեղասպանության օրյեկտ

դարձած ժողովրդի կողոպուտը Օսմանյան կայսրության սահմաններում, կան բազմաթիվ վկայություններ ոչ միայն այդ ոճրի ողջ մնացած գոհերի, այլև գերմանացիների, ամերիկացիների, արաբների և այլոց ցուցմունքներում:

Ահա Մուշում հայերի կոտորածի ականատես գերմանացու ցուցմունքը. «1914թ. հոկտեմբերի վերջերին, երբ թուրքերը պատերազմի մեջ մտան, թուրք աստիճանավորները սկսեցին հայերից խլել այն ամենը, ինչի կարիքն ունեին պատերազմի համար: Հայերի ունեցվածքը, նրանց փողերը, ամեն ինչ բռնագրավեց: Ավելի ուշ յուրաքանչյուր թուրք կարող էր մտնել հայի խանութ ու վերցնել այն, ինչի կարիքն ուներ կամ ինչը կուզեր ունենալ...»:

Ամերիկյան հյուպատոս Ջեքսոնը, տեղում հետևելով դեպքերին, ուղղակի մատնացույց է անում թուրքական կառավարության դերը հայ ժողովրդի կողոպտման կազմակերպման մեջ, որպես հայերի բնաջնջման բաղկացուցիչ մաս, «կողոպտման և այդ ցեղի բնաջնջման համար վերջին վիթխարի հարվածի մի պլան»:

Եվս մի ցուցմունք՝ հրապարակված 1915թ. հոկտեմբերի 4-ին, հայերի հանդեպ կատարված գազանությունների հետաքրքրման ՄԱՆ-ի հանձնաժողովի զեկուցագրից. «Ոստիկանությունը քաղաքի հազարավոր հայկական տներից մեկը մյուսի ետևից կահկարասին է հանում ..., և թուրք կանանց ու երեխաների ամբոխը, որպես արնախումների ոհմակ, հետևում է ոստիկանությանը: Այն բանից հետո, երբ ոստիկանությունը տնից տանում է արժեքավոր բոլոր իրերը, նրանք խուժում են ներս և խլխլում մնացած ամեն ինչ: Սեփական աչքով եմ տեսնում, թե ինչպես է դա կատարվում ամեն օր: Կարծում եմ, որ մի քանի շաբաթ է պետք բոլոր տներն անայացնելու համար, հետո կրատարկեն հայերի կրայակներն ու խանութները»:

Ահա բեդուին պաշտոնավոր Ֆայիզ էլ-Հուսեյնի 1916թ. թվագրված վկայությունը. «Հայերին ոչնչացնելուց հետո նրանց տների ամբողջ կահույքը, սպիտակեղենը, իրերը և ամեն տեսակի տնտեսական կարասին, ինչպես նաև նրանց խանութներում ու պահեստներում եղած ամեն ինչը հավաքում ու տանում էին ե-

կեղեցիները կամ ուրիշ ընդարձակ շինություններ: Կառավարությունը հատուկ հանձնաժողովներ է ստեղծել այդ ունեցվածքի վաճառքի համար, որն իրականացվում էր ամենապարզ գներով, ինչ սովորաբար լինում է տիրոջ բնական մահից հետո, քայքայն տարբերությամբ սուկ, որ ստացված գումարները հանձնվում էին ոչ թե մահացածի ժառանգներին, այլ մուտք արվում թուրքական կառավարության գանձատուն: Երեսուն ֆունտ արժողությամբ գորգերը վաճառվում էին 4-5 ֆունտով, տղամարդու 4 ֆունտ արժողությամբ կոստյումը վաճառվում էր երկու մեջիդիեով և այլն: Երաժշտական նվագարաններ, ինչպես, ասենք, դաշնամուր և այլն, համարյա ծրի էին տալիս: Բոլոր փողերը և թանկարժեք իրերը հավաքվում էին ժանդարներիայի պետ Ռուշդի բեյի և նահանգապետ Ռեշիդ բեյի մոտ: Վերջինս այդ ամբողջը տարավ Կոնստանդնուպոլիս, անձամբ Թալեաթ բեյին հանձնելու համար...»:

Հայերի ցեղասպանության շվեյցարացի հետազոտող Ջոտլինդենը, 1918թ. վկայակոչելով գերմանական «քաջատեղյակ» մի աղբյուր, գրել է. «...այն, ինչ կատարվեց իրականում, մեկուկես միլիոն քաղաքացիների լայնամասշտաբային ունեզրկում էր»:

Անգլիական հետախուզության տվյալներով «...Մարդի-նում և Դիարբեքիում կողոպտվեց 6 միլիոն թուրքական ֆունտ արժողությամբ ակնեղեն, գորգեր, հնաոճ իրեր և 1,5 միլիոն թուրքական ֆունտ արժողությամբ ոսկի»: Հայերի ցեղասպանության կազմակերպիչներից մեկը՝ Դիարբեքիի նահանգապետը, Հալեպ հասավ «...Կոնստանդնուպոլիս տանող գնացքով, 48 արկղ ոսկերչական իրերով և թանկարժեք քարերով լի երկու սնդուկով»:

Հայերի ունեցվածքը յուրացնելու մեղադրանքներից արդարանալու նպատակով Էրզրումի նախկին գեներալ-նահանգապետ Հասան Թահսինը (Յուսեր) «Ջումհուրիյեթ» թերթում հրապարակած բաց նամակում հայտնել է հետևյալ փաստը. «Նախքան տեղահանումը, Էրզրումի հայերն իրենց պատկանող ոսկին ու ակնեղենը պահ տվեցին Օտոմանյան բանկին, համապատասխան անդորագրեր ստանալով: Տեղահանությունից հետո

Ֆինանսների մինիստրությունը վկայակոչեց օրենքը լքյալ ունեցվածքի մասին՝ հիմնավորելու համար այդ ավանդների նկատմամբ իր պահանջները: Բանկը մերժեց, սակայն տևական բանակցություններից և մինիստրության ներկայացրած նյութական երաշխիքներից հետո համաձայնության եկան՝ էրզրումցի հայերի բանկային բոլոր ավանդները Ֆինանսների մինիստրությանը հանձնելու մասին: Համապատասխանաբար էրզրումի զինվորական նահանգապետ Ջեմալ բեյը և Օտոմանյան բանկի էրզրումյան բաժանմունքի տնօրեն Ջելալ բեյը համատեղ կնքեցին ծրարները, և Ջեմալ բեյը դրանք տարավ Ստամբուլ ու հանձնեց Ֆինանսների մինիստրություն, ստանալով համապատասխան ստացական: Այդ ստացականը դեռևս պահվում է ինձ մոտ, և ես պատրաստ եմ հրապարակել պատճենը»:

Թուրքիայում ԱՄՆ դեսպան Հ. Մորգենթաուն իր հուշերում հայտնում է «այս աշխարհում ամենազարմանալի դեպքի»՝ թուրքական կառավարության կողմից «երկար տարիներ հայերի հետ նշանակալի գործեր ունեցող» ամերիկյան ապահովագրական «New York Life insurance Company» և «EQUITABLE Life of New York» ընկերություններում նույնիսկ հայերի ունեցած ապահովագրական գումարները ձեռք գցելու փորձերի մասին: Մեծ վեզիրը խնդրել էր դեսպանին «սիրալիր գտնվել»՝ օգնել ստանալ այդ գործակալությունների հայ հաճախորդների լրիվ ցուցակը, «քանի որ համարյա բոլորը հիմա մահացել են, ժառանգներ չթողնելով, այդ պատճառով էլ նրանց փողերը անցնում են կառավարությանը, որն էլ դրանցից պետք է օգտվի»:

Ակներև է, որ նմանօրինակ խնդրանքով թուրքական կառավարությունը դիմել էր նաև իր դաշնակիցներին՝ Գերմանիային, Ավստրո-Հունգարական կայսրությանը, ինչպես նաև եվրոպական այն պետություններին, ում հետ չէր պատերազմում: Խոսքը պիտի գնար բավական խոշոր գումարների շուրջ, քանի որ հայերի ունեցվածքը և կյանքը միշտ էլ սպառնալիքի տակ են եղել. բոլոր նանք, ուլքեր կարող էին, ապահովագրում էին իրենց կյանքը և ունեցվածքը եվրոպական երկրների և ԱՄՆ-ի ապահովագրական ընկերություններում:

Տվյալներ կան առ այն, որ հայկական բռնազավթված

փողերի մի մասը թուրքական կառավարությունն ավանդագրել է իր դաշնակիցների՝ Գերմանիայի և Ավստրիայի բանկերում, իսկ պատերազմում նրանց պարտությունից հետո դա անցել է Անտանտայի տերությունների տնօրինությանը:

Այսպես, Հերբերտ Ասկվիտը և Սթենլի Բուլդոլինը, որոնք տարբեր ժամանակներ զբաղեցրել են Մեծ Բրիտանիայի պրեմիեր մինիստրի պաշտոնը, 1924թ. սեպտեմբերին պրեմիեր Ռամզեյ Մակդոնալդին ուղղված հուշագրում նշել են, որ «թուրքական կառավարության կողմից 1916թ. Բեռլին փոխանցված և հաշտություն կնքելուց հետո Դաշնակցային պետությունների գրաված 5 միլիոն ֆունտ ստեռլինգը (թուրքական ոսկով) մեծ մասամբ (հնարավոր է՝ ամբողջությամբ) հայկական փողեր են»: Հուշագրում նշվել է նաև, որ հայերի բռնի տեղահանությունից հետո նրանց բանկային հաշիվներն ու ավանդները «կառավարության հրամանով փոխանցվել են Կոստանդնուպոլիս, պետական գանձատուն և «դրա շնորհիվ թուրքերը կարողացել են Բեռլին, Reichbank ուղարկել 5 միլիոն ֆունտ»: Գերմանական հետազոտողների հաշվումներով 1916թ. փոխանցված գումարը կազմել է 100 միլիոն ոսկե մարկ:

Էկոնոմիկայի մինիստր Ջավիդը իր հուշերում հայտնել է, որ 1918թ. նոյեմբերի 9-ին կարգադրություն է արել «ըջալ ունեցվածքի» իրացումից գոյացած գումարներից օգտագործել 1 միլիոն թուրքական ֆունտ:

1919թ. նոյեմբերին հրապարակված գերմանական տրվյալների հիման վրա դոկտոր Յ. Լեփսիուսի գնահատումով թուրքերի բռնագավթված հայկական ունեցվածքի արժեքը կազմել է 1 մլրդ մարկ (250 մլն դոլար):

1919թ. հայկական ազգային պատվիրակության նախաձեռնությամբ օտարերկրյա մասնագետներից հատուկ հանձնաժողով կազմվեց՝ Օսմանյան կայսրությունում ցեղասպանության հետևանքով հայերին հասցված նյութական վնասի գնահատման համար: Հանձնաժողովը եկավ այն միաձայն եզրակացության, որ հայերից զավթված արժեքները 3 միլիարդ 750 միլիոն դոլար արժողություն ունեն: Այդ թիվն ընդունեց նաև ամերիկյան Կոնգրեսի հանձնաժողովը՝ Ջեյմս Ջերարդի գլխավորությամբ:

Հայերը կողոպուտի են ենթարկվել ոչ միայն Օսմանյան կայսրության տարածքում, այլ նաև դրա սահմաններից դուրս, նախկին Ռուսական կայսրության տարածքում՝ Ղարսի մարզում, Ալեքսանդրապոլում, Երևանում: Նախիջևանում, Ղարաբաղում, Բաքվում հայկական ջարդերի և ցեղասպանության քաղաքականությունը իրականացրել են թուրքական զորքերը, բաթար հրոսակախմբերի հետ համատեղ:

Հայկական շատ ընտանիքներում պահվում են Դաշնակից տերությունների Վերստուգիչ հանձնաժողովի կողմից տերերին կամ նրանց իրավահաջորդներին տրված իրավունքի «վկայագրերը», դրանցում նշված գումարներն ստանալու համար, որպես «Բաքու քաղաքում թուրքական զորքերի զավթումներից բնակչությանը հասցված վնասների» փոխհատուցում:

1919թ. Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավ. Ահարոնյանի և Հայկական ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբարի ստորագրությամբ Փարիզի խաղաղության կոնֆերանսին ներկայացվեց Արևմտյան Հայաստանի և Կովկասի Հայկական Հանրապետության տարածքներում հայ ազգին հասցված և ռեպարացիայի ու փոխհատուցման ենթակա վնասի մոտավոր գնահատումը:

Ըստ ժամանակի, գնահատումն ընդգրկում էր միայն 1915-1919 թվականները, հետևաբար չէր հաշվառված ցեղասպանության վաղ փուլում՝ 1878-1914 թվականներին հասցված վնասը: Չէր կարող նաև ընդգրկված լինել շարունակվող ցեղասպանության վնասն ինչպես Օսմանյան կայսրության սահմաններում 1920-1923թ.թ. (մասնավորապես, բենալական զորքերի կողմից Կիլիկիայում հայերի կրկնական արտաքսման ու կոտորածի և Իզմիրում հայերի ու հույների ջարդերի ընթացքում), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սահմաններում (թուրքական զորքերի կրկնական ներխուժումը Ղարսի նահանգ, Նախիջևան, Շարուր, Սուրմալու, Ալեքսանդրապոլ և այլն, Շուշում 20 000 հայերի սպանողի, ցեղասպանության այլ գործողությունների ընթացքում, որ իրականացվեցին ադրբեջանական հրոսակախմբերի հետ համատեղ):

Ամենանախնական և ամենևին ոչ լրիվ հաշվարկներով

1915-1919թ.թ. ընթացքում հասցված վնասի գումարը կազմում էր 19 130 932 000 ֆրանսիական ֆրանկ, որից Արևմտահայաստանի հայությանը բաժին էր ընկնում 14 598 460 000, իսկ Հայաստանի Հանրապետությանը՝ 4 532 472 000 ֆրանկ:

ՀԱՅԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՍԱՆԱԳՐԵՐՈՒՄ

Սեփականության իրավունքի անձեռնմխելիության սկրզբունքը հաստատված է միջազգային մակարդակով: Նույնիսկ Թուրքիայի պարտադրած 1918թ. հունիսի 4-ի Բաթումի համաձայնագրում ընդունվում էր, որ ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացի միայն պետության շահերից ելնելով և փոխհատուցման հիման վրա: Ցեղասպանության համար նյութական պատասխանատվության և հանցագործության գոհերի սեփականության իրավունքները հարգելու մասին հարցն առավել ամբողջությամբ կարգավորվել է Սևրի դաշնագրում: Այս փաստաթղթերի դրույթները հայերի ունեցվածքը զավթած Թուրքիայի և թուրքական քաղաքացիների նյութական պատասխանատվության մասին լրացրել են, բայց ամենևին չեն փոխարինել թուրքական պետության քաղաքական պատասխանատվությանը վերաբերող դրույթներին: 1915թ. հայերի «լքյալ» ունեցվածքի մասին թուրքական օրենքներն անվավեր են ճանաչվել, իսկ սեփականության իրավունքը շարժական և անշարժ ամբողջ կայքի վրա՝ վերականգնվել է: Համապատասխանաբար չեղյալ հայտարարվելու ենթակա են համարվել հայերի ունեցվածքի վաճառքի կամ իրավունքների փոխանցման վերաբերյալ 1914թ. հունվարի 1-ից հետո կայացված բոլոր փաստաթղթերը: Վնասները, որոնք կարող էին կրել այդ ունեցվածքը ձեռք բերող անձինք, ենթակա էին փոխհատուցման թուրքական կառավարության կողմից, իսկ նրանց իրավունքները չէին կարող հիմք ծառայել հայերի ունեցվածքի ռեստիտուցիան ձգձգելու համար: Սեփականատերերի մահվան կամ անհետացման դեպքում, ժառանգորդների բացակայության պայմաններում, ունեցվածքը հարկ էր փոխանցել համայնքին, բոլոր հայցերը ենթակա էին Ազգերի լիգայի խորհրդի կողմից նշանակված միջնորդա-

կան հանձնաժողովների քննարկմանը:

Թուրքիայի սուլթանական կառավարությունը, պատրաստվելով ստորագրել Սևրի դաշնագիրը, 1920թ. հունվարի 8-ին արդեն անվավեր համարեց «ժամանակավոր օրենքը»: Ստորագրելով դաշնագիրը, կառավարությունն ընդունեց Թուրքիայի պատասխանատվությունը հայերի ցեղասպանության համար, միջազգային-իրավական բոլոր հետևանքներով հանդերձ:

Մակայն թուրք ազգայնական-քեմալականների և ռուսաստանյան բոլշևիկների միջև գաղտնի գործարքի, ապա արևմտյան տերությունների քաղաքական աճապարարությունների հետևանքով Սևրի դաշնագիրը փոխարինվեց 1923թ. Լոզանի համաձայնագրով, որը չէր բովանդակում դրույթներ Հայաստանի և հայ ժողովրդի մասին: Որպես Սևրի դաշնագրի համաձայն տարածքային վերափոխումներից և հայ-թուրքական սահմանի խնդրով ԱՄՆ պրեզիդենտ Վ. Վիլսոնի միջնորդական վճռից հրաժարվելու պայման, արևմտյան տերություններն ընդունեցին «համաներման» հռչակումը և Թուրքիայի պարտավորությունը՝ պաշտպանելու ազգային փոքրամասնությունների իրավունքները:

Օսմանյան կայսրության սահմաններում կատարված ցեղասպանության զոհ հայերն իրենց ունեցվածքային իրավունքների պաշտպանության համար կարող էին վկայակոչել միայն Լոզանի համաձայնագրի 38-44 հոդվածները՝ նվիրված ազգային փոքրամասնություններին:

**ԹՈՒՐԷԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ ԵՆ ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆԸ**

Ընդունելով համաձայնագրի այդ դրույթները ճանաչելու պարտականությունը որպես իր ազգային իրավունքի հիմնարար նորմեր, որոնց չեն կարող հանդիպադրվել իշխանությունների որևիցե օրենքներ, կանոնակարգեր կամ գործողություններ, Թուրքիան իրականում չէր պատրաստվում դրանք կիրառել հայերի նկատմամբ:

Հայ ժողովրդի հանդեպ «նոր» Թուրքիայի քեմալական

կառավարության վերաբերմունքի հիմքում ցեղասպանության ավանդական քաղաքականության ժառանգականության փաստն էր ընկած: Սա չէր ընդունում հայերի սեփականության ամենատարրական իրավունքները, նույնիսկ «ազգային փոքրամասնությունների» նկատմամբ իր իսկ միջազգային պարտավորությունների հիման վրա:

Արդեն 1922թ. սեպտեմբերի 14-ին քեմալականները հայտարարեցին, որ իրենք չեն ընդունում սուլթանական կառավարության կողմից ժամանակավոր օրենքի անվավերության մասին փաստաթուղթը, իսկ Լոզանի համաձայնագիրը կնքելուց անմիջապես առաջ, 1923թ. ապրիլի 15-ին Թուրքիայում օրենք ընդունվեց «լքյալ ունեցվածքի» մասին, որով հայերի ամբողջ ունեցվածքը բռնագրավվում էր, անկախ նրանից, թե ինչ մոտիվներով ու ինչ հանգամանքներով էին նրանք թողել երկիրը: Ժխտվում էր սեփականության իրենց իրավունքների պաշտպանության հնարավորությունը նույնիսկ երաշխավորագրերի միջոցով: Հայերին տրված բոլոր լիազորագրերը հայտարարվեցին անվավեր: Վկայակոչելով այդ օրենքի դրույթները, թուրքական կառավարությունը պահանջներ առաջադրեց թուրքական բանկերում և օտարերկրյա բանկերի բաժանմունքներում հայերի ավանդների նկատմամբ: Պահանջներ առաջադրեց նաև այդ բաժանմունքների՝ Եվրոպա փոխանցված ավանդների նկատմամբ, դրանով իսկ խանգարելով այդ գումարներն օրինական սեփականատերերին հասնելը:

Ազգային փոքրամասնությունների մասին Լոզանի պայմանագրի դրույթների կիրառումը թույլ չտալու և նույն պայմանագրի հոդվածների հիման վրա Ազգերի լիգայի միջամտության հնարավորությունը բացառելու նպատակով Թուրքիայի քեմալական կառավարությունը վճռեց փախստական հայերին զրկել թուրքական քաղաքացիությունից:

1923թ. սեպտեմբերին Լոզանի պայմանագրի վավերացումից հետո Թուրքիայում օրենք ընդունվեց, որով վերադառնալու իրավունքից զրկվում էին Կիլիկիայից և արևելյան վիլայեթներից «տարագրված» հայերը:

1925թ. դեկտեմբերի 26-ին թուրքական թերթերը հայտա-

րարութիւն տպագրեցին՝ քանի որ հայերին պատկանող լքյալ ունեցվածքի վաճառքը վնաս է հասցնում երկրի շահերին, շահագրգիռ մարմիններին կարգադրվել է անցկացնել հայերի թողած անշարժ կայքի, նրանց պատկանած հողերի, պտղատու այգիների և այլ ունեցվածքի գնահատումը և անհապաղ դնել աճուրդի:

Թուրքիայի զանազան քաղաքներում հայերի վաճառքի հանված ունեցվածքի բնույթի և ծավալի մասին պատկերացում կարելի է կազմել թուրքական թերթերի հաղորդակցությունների հիման վրա Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեի կազմած ցուցակից, որ ներկայացվել է Ազգերի լիգայի Գլխավոր քարտուղարին դեռևս 1925թ. սեպտեմբերի 5-ին:

1926թ. օգոստոսին Թուրքական Հանրապետության կառավարությունը հայտարարեց, որ մտադիր է յուրացնել մինչև Լոզանի պայմանագիրն ուժի մեջ մտնելը, այն է՝ մինչև 1924թ. օգոստոսի 6-ը բռնագրավված ամբողջ սեփականությունը, ունեցվածքը, և որ ռեստիտուցիայի է ենթակա սուկ այն սեփականությունը, որը բռնագրավվել էր այդ ժամկետից հետո, այն էլ պայմանով, որ ինքը չի իմացել լքյալ ունեցվածքի գոյության մասին:

Շարունակելով ստեղծել «ոչ-ֆակտո» իրավիճակներ, «նոր» Թուրքիան 1927թ. մայիսի 23-ին հրապարակեց ևս մի օրենք, որով լիովին բացառվում էր հայերի վերադարձի հնարավորությունն իրենց պատմական հայրենիք: Այդ օրենքով գործադիր իշխանությունը լիազորվում էր թուրքական քաղաքացիությունից զրկված հայտարարել «Օսմանյան կայսրության այն հպատակներին, որոնք հանուն անկախության պատերազմի ժամանակ չէին մասնակցել ազգային պայքարին, գտնվել էին Թուրքիայից դուրս և թուրքական տարածք չէին ներգաղթել 1923թ. հուլիսի 24-ից մինչև սույն օրենքի հրապարակումն ընկած ժամանակահատվածում:

Քենալական Թուրքիան այսպես քաղաքացիության իրավունքից զրկեց կոտորածներից փրկված հարյուր հազարավոր հայերի: Արգելեցին սեփական տները վերադառնալու իրավունքը, առանց որևէ մեղադրանք ներկայացնելու, պարզապես հիմք ընդունելով, որ որպես հայեր «վատ անցյալ» ունեն՝ մեղադրվում

են Թուրքիայի դեմ հանցանք գործելու մեջ: Զաղաքացիությունից զուրկ վիճակում հայտնված հայերը ստանում էին 1922թ. Ազգերի լիգայի կողմից նորվեգացի նշանավոր գիտնական և մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենի նախաձեռնությամբ գործածության մեջ դրված, այսպես կոչված, «նանսենյան անձնագրեր»:

Իմիջիայլոց նկատենք, որ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո 100 հազար հայեր ապաստան գտան Հայկական ԽՍՀ-ում, և նրանցից շատերին Սիբիր արքայրեց Ստալին-Բերիա հրոսակախումբը, բայց արդեն այն հիման վրա, որ որպես «թուրքահպատակ» սպառնում էին ԽՍՀՄ անվտանգությանը:

Թուրքական Հանրապետության օրենքները և թուրքական պետության դիրքորոշումն ամբողջապես ցեղասպանության զոհ հայերի նկատմամբ անհամատեղելի են միջազգային իրավունքի ամենատարրական նորմերին և հակասում են միջազգային պարտավորություններին:

Իսկ ինչպե՞ս է արձագանքել այս կամայականությանը միջազգային հանրությունը: Ինչպե՞ս է նա վերաբերվել թուրքական պետության կողմից հայ ժողովրդի կողոպտմանը:

ՈՎ ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ՑԱՆԿԱՑԵԼ «ՓԱԿԵԼ» ՀԱՐՑԸ

Մեծ տերությունների վերաբերմունքը հայերին կողոպտելու հանդեպ կանխորոշված էր հայասպանության, այսպես կոչված, «հայկական հարցի» նկատմամբ նրանց վերաբերմունքով:

Զաղաքական և նյութական պատասխանատվության հարցը ձգտել է փակել ոչ միայն Թուրքիան: Այս հարցը գործնական հարթության վրա է եղել նաև եվրոպական տերությունների պարագային, որոնք մեղավոր են հայերի ցեղասպանության թողտվության (Անտանտի տերություններ) և նույնիսկ մասնակցության (Գերմանիա) մեջ:

Գերմանիայի արտգործմինիստրության իրավական խորհրդական դոկտոր Օտտո Հոպպերտը, կանխատեսելով Գերմանիայի մոտալուտ, այդ թվում նաև՝ ֆինանսական պատասխանատվությունը, իր աջակցությամբ դաշնակից Թուրքիայում կազմակերպված հայերի, այսպես կոչված, տեղահանու-

թյան խնդրում, կո) Լ. արև միջոցներ ձեռնարկել իր երկրի վրայից մասնակցության մեղադրանքները հեռացնելու համար. «Դա ծանր մեղադրանք է, ուրիշ մենք պիտի ազատվենք թեկուզև ֆինանսական նկատառումներով, քանզի հակառակ դեպքում մենք պատասխանատվություն կկրենք հասցված վնասի համար»:

Սևրի դաշնագիրը Լոզանի համաձայնագրով փոխարինելուց հետո ստեղծված քաղաքական պայմաններում, երբ արևմրտյան տերությունները հայ ժողովրդի իրավունքները զոհաբերեցին իրենց շահատենչ իմպերիալիստական հետաքրքրություններին, հայերի ցեղասպանության նյութական պատասխանատվության հարցը տակնահան, ապա և բացահայտ եղանակով փոխադրվեց «վնասների հատուցման» կամ փախստականների տեղավորման միանգամայն ուրիշ հարթություն:

Հերբերտ Ասկվիտը և Սթենլի Բոլդուինը, «նկատի առնելով, որ հայերի հանդեպ ընդունված պարտավորությունները չեն կատարվել» և որ «նրանք ունեն փոխհատուցման բարոյական իրավունք», վերը նշված հուշագրում բարձրացրել են հայ ժողովրդին տրվելիք գրանտի հարցը, որպեսզի «վերջնականապես հանվի հայկական հարցը»: Առաջարկության նախաձեռնողների խոսքերով, «սա ոչ մի քաղաքական նշանակություն չունի», իսկ նպատակը «հայերի հանդեպ Դաշնակից տերությունների պատասխանատվության վերջնական վերացումն է»:

Հատուցման նման հարցադրումն իրենց իսկ՝ հայերի կողմից ընդունվել է որպես թուրքական պետության քաղաքական պատասխանատվության նենգափոխման փորձ, որպես իր ազգային տարածքներից ժողովրդի զրկման կապալագումար, որպես նահատակների հիշատակի անարգանք:

ՀԱՅԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՏՆԱՀԱՐՄԱՆ ՀԱՐՑԸ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅՈՒՄ

Ազգերի լիգան Հայաստանի ճակատագրով զբաղվել է իր գոյության հենց սկզբից: Համակողմանի ընդգրկումներով քաղաքական այդ առաջին կազմակերպության հայտնի թուղթյունը և անգործնականությունը թույլ չեն տվել նրան սյաշտպանել Հայաստանը և հայ ժողովրդին. ընդունված որոշումները և ցանկու-

թյունները մնացել են թղթի վրա: Լիզան չի կարողացել լուծել այնպիսի, թվում է, սակավ քաղաքականացված խնդիր, ինչպիսին Թուրքիայի նյութական պատասխանատվության հարցն է՝ հայերին և հայ ժողովրդին ամբողջությամբ հասցված վնասի հատուցմամբ:

Ազգերի Լիգայում այդ հարցի բննարկումն ընդունեց մարդասիրական շինծու ակցիայի բնույթ՝ ուղղված կիսամիջոցների, չապաքինող որոշումների, ցուցադրական բարեգործության ընդունման: Ահա թե ինչպես է գնահատել Ազգերի լիգայի գործունեությունը մեծ մարդասեր Ֆրիտյոֆ Նանսենը. «Իսկ ինչու՞ է Ազգերի լիգան կոմիտեներ ստեղծում՝ տեսնելու համա՞ր, թե որևէ բան չի՞ կարելի անել անտուն հայ գաղթականների համար: Ո՞չ սոսկ արդյոք, որպեսզի հանգստացնի իր ամոթահար խիղճը, եթե դիտ մնացել է: Ի՞նչ օգուտ նրանից, երբ հարցի համակողմանի ուսումնասիրումից հետո բարեխիղճ հետազոտողների առաջարկությունները չեն կարողանում պետական իշխանությունների աջակցությունը գտնել, երբ պետությունները հրաժարվում են ամենահամեստ զոհաբերությունների գնալ, օգնելու համար լքված գաղթականներին, ում այնքան բան էր խոստացված»:

Զննարկելով Ազգերի լիգայի գործունեությունը ցեղասպանության գոհերին հասցված վնասի փոխհատուցման կամ ռեստիտուցիայի հարցում, ամենից առաջ հարկ է նշել այն անձանց կարգի նեղացումը, որոնց իրավունքները ենթակա էին վերականգնման: Խոսքը պիտի գնար հայերի ստորև հետևող կարգերի մասին, որոնք կողոպտման էին ենթարկվել ցեղասպանության տարբեր ժամանակահատվածներում (թվարկվում են ժամանակագրական եղանակով) .

1) նրանք, ովքեր Օսմանյան կայսրությունը թողել էին 1878-1915թ.թ., փրկվելով կոտորածներից և պարբերական անպատիժ սպանություններից ու կամայականություններից (ահաբեկչություն) թուրքական անձնագրերով կամ առանց դրանց,

2) նրանք, ում հաջողվել էր փախուստով փրկվել ամենուրեք հայերի կատարվող գլխովին բնաջնջումից (այդ թվում նաև՝ տեղահանման միջոցով), 1915-1920թ.թ., առանց թուրքական անձնագրերի,

3) նրանք, ովքեր թողել էին Օսմանյան կայսրությունը այդ նույն թվականներին, երկրի իշխանությունների տված անձնագրերով,

4) նրանք, ովքեր թողել էին Օսմանյան կայսրության տարածքը, Դաշնակից երկրների օկուպացիայի ժամանակ, Մուղղուսյան հաշտության փաստաթղթի հիման վրա օկուպացիոն իշխանությունների տված անձնագրերով,

5) նրանք, ովքեր երկրորդ անգամ էին փախել Կիլիկիայից այն բանից հետո, երբ Ֆրանսիական իշխանությունները քենալականների հետ պայմանավորվածությամբ իշխանությունը հանձնեցին թուրքերին,

6) նրանք, ովքեր թողել էին Չնյուռնիան քենալական զորքերի ղեկավարության հրամանով, կոտորածի սպառնալիքի տակ,

7) Գարսի նահանգի հայ ազգաբնակչությունը փախել էր 1918թ. Օսմանյան կայսրության բանակի ներխուժման ընթացքում և քենալական բանակի ներխուժումից հետո Հայաստանի Հանրապետություն 1920թ. և 1921թ. Մոսկովյան պայմանագրի համաձայն բռնակցումից հետո,

8) Նախիջևանի մարզի, Շահթախտիի և Մուրճալուի հայ ազգաբնակչությունը, թուրքական բանակի ներխուժումից հետո, թաթար (ադրբեջանական) հրոսակախմբերի հետ համատեղ կատարված ջարդերի և կոտորածների ընթացքում, ինչպես նաև այդ տարածքները Ադրբեջանական ԽՍՀ հանձնելուց հետո, ըստ 1921թ. Մոսկովյան պայմանագրի,

9) Բաքվի, Գյանջայի (Գանձակ) և Ադրբեջանական ԽՍՀ կազմ մտցված այլ տարածքների հայերը՝ 1918 և 1920թ.թ. թուրքական զինված ինտերվենցիայի ընթացքում կողոպուտների և կոտորածների զոհերը,

10) ավելի ուշ Վրացական ԽՍՀ կազմի մեջ մտցված Ախալքալաքի հայությունը, որը կողոպուտի և կոտորածի էր ենթարկվել թուրքական օկուպացիայի ընթացքում:

Իսպանիայի, Իտալիայի և Շվեդիայի նախաձեռնությամբ Ազգերի լիգայի Խորհուրդը զբաղվեց թուրքական կառավարության կողմից միայն Օսմանյան կայսրության նախապատերազ-

մյան սահմաններից ելած հայ գաղթականների ունեցվածքի և բանկային հաշիվների անօրեն բռնագրավման հարցի քննությանը: Դուրս մնացին մինչև առաջին Հանաշխարհային պատերազմը Ռուսաստանի կազմում գտնվող, հետագայում Թուրքական Հանրապետության, Հայկական, Վրացական և Ադրբեջանական ԽՍՀ տարածքներում ցեղասպանության զոհ հայերի իրավունքներն ու շահերը:

Սակայն այդչափ նեղ (տարածքային և բովանդակային առումով) հարցադրումն առկախ մնաց այն պատճառով, որ Թուրքական Հանրապետությունը կոչտ ու ծայրահեղ ժխտողական դիրք գրավեց:

1925թ. հոկտեմբերի 20-ին թուրքական կառավարությունը Ազգերի Լիգայի Գլխավոր քարտուղարին նամակ ուղարկեց Թեֆիկ Քյամիլ-բեյի ստորագրությամբ, ուր հայտարարվում էր, թե «մինչև Լոզանի պայմանագրի ստորագրումը, թուրքական տարածքները թողած հայերի ներկա վիճակը կարգավորված է Լոզանի կոնֆերանսում Իսմեթ փաշայի հայտարարություններով, որոնք տեղ ունեն 1923թ. հուլիսի 17-ի նիստի արձանագրության մեջ»:

Ստեղծված պայմաններում, երբ հայ ժողովրդի ազգային պետականությունը ճգնված էր քեմալական Թուրքիայի և բուշևիկյան Ռուսաստանի համատեղ գործողություններով, ախարհով մեկ ցրիվ եկած հայ գաղթականների իրավունքները և շահերը կարող էին պաշտպանել միայն հասարակական կազմակերպությունները: 1925 թվականից նրանց անունից Ազգերի լիգա սկսեցին հասնել Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեի հանրագրերն ու հուշագրերը, որոնցում ապացուցվում էր պատերազմից հետո վերադառնալու ենթակա (պաշտոնական վարկածով) հայերի սեփականության բռնագրավման ապօրինությունը և իրավաբանական ոչնչությունը: Կոմիտեն բողոքում էր հայերի ունեցվածքը «բյալ» հայտարարելու և պետության կողմից յուրացման ենթակա դիտելու դեմ, ունեցվածք, որոնց տերերը սպանվել էին թուրքական պետության կազմակերպած և իրականացրած ցեղասպանության ընթացքում կամ փրկվել՝ թողնելով երկիրը: Կոմիտեն ապօրինի էր համարում հայերին

սեփականության իրավունքից զրկելը՝ քաղաքացիությունից զրկելու, ժամանակավոր մուտքի թույլտվություն, անձը հաստատող վկայագրեր տալու և այլ գործողություններ կատարելու հնարավորությունը մերժելու միջոցով գործողությունները, որոնք անհրաժեշտ էին ունեցվածքային իրավունքների կամ ժառանգության իրավունքի, կտակի կամ խնամակալության հաստատման համար, ապօրինի էր համարվում նաև՝ Թուրքիայի պետական սահմաններից դուրս հայտնված հայերի՝ երաշխավորագրերով ներկայանալու իրավունքի մերժումը:

Այլ կերպ ասած, Թուրքական Հանրապետությունը բացե-իրաց մերժում էր արդարադատությունը հայերի համար: Թուրքիայի պաշտոնական հեռագրական գործակալությունը 1927թ. նոյեմբերի 22-ին թերթերի միջոցով հայտարարեց, որ «...կառավարությունը, տեղեկություններ ստանալով, որ առանձին դատարաններ վճիռներ են կայացնում բացակայող հայերի օգտին, ստացել է արդարադատության մինիստրության համաձայնությունը, թե դատարաններն այլևս նման վճիռներ չեն կայացնի»:

Յեղասպանության հետևանքով հայ ժողովրդի կողոպտման վաստին քաղաքական և իրավական գնահատական տալու փոխարեն, Ազգերի լիգայի Խորհուրդը հայ գաղթականների՝ իրեն հղած բոլոր գանգառներն ու բողոքները հանձնեց Թուրքական Հանրապետության կառավարությանը, «համապատասխան հաստատված ընթացակարգի»:

Ի պատասխան, թուրքական կառավարությունը Ազգերի Լիգայի Գլխավոր քարտուղար է. Դրյումոնդին ուղարկեց իր արտաքին գործոց մինիստր Ռուշդիի 1928թ. փետրվարի 25-ի թվակիր նամակը, ուր, ինչպես հարկ էր սպասել, շարադրված էր այդ երկրի պաշտոնական դիրքորոշումը տվյալ հարցում:

Ինքնամերկացնող այդ փաստաթղթի տեքստը հարկ էր մեջբերել ամբողջությամբ, սակայն առանձին քաղվածքներն էլ բավական են լրիվ պատկերացում ստանալու համար ցեղասպանության գոհ-հայերի իրավունքների նկատմամբ թուրքական կառավարության վերաբերմունքի մասին:

«Թուրքական կառավարությունը գտնում է, որ հայ գաղթականների ճակատագիրը, հավասարապես նաև՝ «ըբյալ ունեց-

վածքի» հարցը, ենթակա չէ բննության՝ իրենց ընդունած պարտավորությունների շրջանակում, քանի որ փախած հայերը (fugitifs!), որոնց մասին որ խոսք է գնում, ոչ մի դեպքում չեն կարող իրավացիորեն հավասարեցվել ներկայումս իր տարածքում բնակվող փոքրամասնություններին և այդ հիման վրա լրիվ չափով պայմանագրի (Լոզանի իրենց վերաբերող) հոդվածներից օգտվողներին»:

Հարյուր հազարավոր հայ գաղթականներին քաղաքացիությունից, վերադառնալու և սեփականության իրենց իրավունքների պաշտպանության համար ազգային փոքրամասնություններից զրկումը հիմնավորվում էր հետևյալ փաստարկով. «փախածները գտնվում են հատուկ, այն է՝ հանցագործների վիճակում, որոնք Լոզանի պայմանագրին կից համընդհանուր ներման փաստաթղթի շնորհիվ սոսկ կարող էին ազատված լինել պատժից, որին կենթարկվեին (եթե երկիր վերադառնային) իրենց դատապարտելի գործողությունների համար: Հայերին վերաբերող մնացած բոլոր հարցերում Թուրքիան իրեն վերապահել է գործողությունների կատարյալ ազատություն...»:

Մինիստրը վկայակոչել է Լոզանի կոնֆերանսում թուրք ներկայացուցիչների հայտարարություններում արտահայտված դիրքորոշման անշրջելիությունը. «Կառավարությունն իրեն իրավունք է վերապահել թույլատրել վերադարձը Օտտոմանյան կայսրություն երկիրը թողած այն հպատակներին միայն, որոնք անհարմարություններ չեն ստեղծի: Ներկայացուցիչը ելել է նրանից, որ այն անձինք, ում թուրքական կառավարությունը կմերժի մնան զիջումը, կզրկվեն թուրքական քաղաքացիությունից»:

Վկայակոչելով 1927թ. մայիսի 23-ի օրենքը, որպես «Օտտոմանյան կայսրության հպատակների որոշակի կատեգորիայի» թուրքական քաղաքականությունից զրկելու վերաբերյալ Լոզանի կոնֆերանսում թուրքական պատվիրակության արած հայտարարությունների «իրավագիտական հաստատում», արտաքին գործոց մինիստրը հաստատել է, որ դա վերաբերում է հայերին. «ինքնըստինքյան ակներև է, որ փախած հայերը, ում մասին խոսք է գնում, որոնք ավելի վաղ են թողել երկիրը, անկասկած մտնում են այդ կատեգորիայի մեջ»: Ռուսի և Ազգերի

լիզան «առաջնորդվելով արդարադատության և արդարության վրա հիմնված խաղաղության և կարգուկանոնի հիանալի գաղափարով», չպետք է զբաղվի «այդ կարգի մարդկանց» զանգատներով:

1929Թ. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի դիրքորոշման կապակցությամբ, Հայ գաղթականների կենտրոնական կոմիտեն 1929թ. հունիսի 5-ին իրավաբանական խորհրդատվության համար դիմեց չորս նշանավոր միջազգայնագետ-իրավաբանների՝ Ժիլբեր Ժիդելին, Ալբեր Լապրադելին, Լուի Լեֆյուրին և Անդրե Մանդելշտամին:

Ձևակերպելով հարցումը, Կենտրոնական կոմիտեն հաշիվ էր առել քաղաքական իրողությունները, այն է՝ հայկական հարցի համընդգրկում, այդ թվում նաև նյութական պատասխանատվության խնդրի լուծումը նախատեսող Սևրի դաշնագրի փոխարինման փաստը Լոզանի պայմանագրով, որտեղ Հայաստանը չէր հիշատակվել և որն ամբողջ խնդիրը հանգեցրել էր «ազգային փոքրամասնությունների» իրավունքների մասին անդեմ հողվածների:

Հարցերը ձևակերպված էին ծայրաստիճան նեղ և կոնկրետ.

1) միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները, 1923թ. հունվարի 30-ին և հուլիսի 24-ին Լոզանում ստորագրված հաշտության պայմանագիրը և այլ փաստաթղթերը, մասնավորապես և զլխավոր լիազոր ներկայացուցիչ Իսմեթ-փաշայի 1923թ. հուլիսի 17-ին Լոզանի կոնֆերանսում հրապարակած հռչակագիրը իրավունք տալի՞ս են արդյոք Թուրքիայից ելած հայերին զրկել թուրքական քաղաքացիությունից այն հիման վրա, որ նրանք չեն մասնակցել, այսպես կոչված, «ազգային պայքարին» կամ ելնելով նրանից, որ թուրքական կառավարությունը թույլ չի տվել նրանց վերագաղթել թուրքական պետության տարածք:

2) Նշված փաստաթղթերը իրավունք տալի՞ս են Թուրքիայի կառավարությանն անցկացնել Թուրքիայի սահմաններից դուրս գտնվող հայերի ունեցվածքի և Թուրքիայում հայկական

համայնքի ունեցվածքի բռնագավթումը, իսկ բացասական պատասխանի դեպքում՝ ընդհանուր միջազգային իրավունքը, և վերը նշված փաստաթղթերը պարտավորեցնում են արդյոք Թուրքիայի կառավարությանը Թուրքիայից դուրս գտնվող հայերին և բուն Թուրքիայում հայկական համայնքին վերադարձնել նաքան Լոզանի պայմանագրի ստորագրումը և դրանից հետո բռնագավթած ունեցվածքը:

3) Թուրքիայի կառավարության և Լոզանի պայմանագրի մասնակից-երկրներից կամ Ազգերի լիգայի Խորհրդի անդամ-պետություններից որևէ մեկի միջև առաջացած վեճերը պե՞տք է արդյոք քննարկվեն որպես միջազգային բնույթ ունեցող հարցեր Լոզանի պայմանագրի 44-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, և կողմներից մեկի պահանջով ենթակա՞ են դրանք հանձնելու Միջազգային արդարադատության Մշտական պալատին:

Խորհրդատվական եզրակացությունը կայացվեց 1929թ. օգոստոսի 2-ին: Իրավագետները համընդգրկուն, ծավալուն և փաստարկված գնահատական տվեցին առաջադրված բոլոր հարցերին: Խորհրդատվական եզրակացությունն իր յուրաքանչյուր մասում և ամբողջապես ներկայացնում էր բոլոր չորս իրավախորհրդատուների «փրավաբանական համոզմունքը» (conviction juridique):

Առաջին հարցի պատասխանը բացասական էր: Իրավախորհրդատուները նշել էին, որ Թուրքիան իրավունք չունի ազգային որևէ փոքրամասնության անդամներին գրկել քաղաքացիությունից, դրանով իսկ՝ Ազգերի լիգայի պաշտպանությունից: Բացասական պատասխանը թելադրված էր «ուչ միայն բարոյական, այլև իրավաբանական» պահանջներով: Իրավախորհրդատուները մատնացույց էին արել սկզբունքորեն կարևոր այն փաստը, որ հայերը «երկիրը թողել են, որովհետև անցյալը և երբեմն նույնիսկ ներկան շատ հստակ ցույց էին տալիս նրանց, որ իրենց կյանքը և ունեցվածքն անվտանգության մեջ չեն» և որ «հայերի ծանր վիճակը» բուն Լոզանի կոնֆերանսում երկար բանակցությունների առարկա է եղել:

Քանի որ թուրքական կառավարության տեսակետից հայ զաղթականների վիճակը պիտի կարգավորվեր Իսմեթ փաշա-

հոչակագրով, իրավախորհրդատուները դրա վերլուծությունն էին կատարել ու եկել եզրակացության, որ, ըստ էության, տարբեր երկու հարցերի՝ ներման և տարագիրների թուրքիա վերադառնալու միջև չկար ոչ մի հարաբերակցություն, որ դրանց հանդիպադրումը «քոլոր տեսակետներից արհեստական է և որևէ իրավաբանական հիմնավորում չունի, և իսկական ներումը ենթադրում է տարագիրների վերադարձն իրենց օջախները»:

Իրավախորհրդատուները նշել էին, որ թուրքահպատակ հայերին քաղաքացիությունից զրկելն անենևին հիմնված չէ իրենց քաղաքացիությունից կամավորապես կամ կանխավարկածային հրաժարման վրա. «Անհմաստ է դա վկայակոչելն այն հայերի նկատմամբ, ովքեր փախել են թուրքիայից ողբերգական դեպքերի ընթացքում, որոնց ենթարկվել է ազգը Համաշխարհային պատերազմի ժամանակ և հետո կամ տեղահանվել թուրքական իշխանությունների կողմից»: Հարց չի ծագում նաև նրանց առնչությամբ, ովքեր թողել են թուրքիան թուրքական իշխանությունների տված անձնագրերով: Քաղաքացիության կորուստ չի կարող հետևել նաև միջդաշնակցային իշխանությունների տված անձնագրերով երկիրը թողնելուց. այդ անձնագրերի տալն առաջացել էր հատուկ անհրաժեշտությամբ, տրված փաստաթղթերն ունեին ժամանակավոր բնույթ, և օտարերկրյա քաղաքացիություն չէին շնորհում դրանք ունեցողներին:

Արձանագրելով, որ «քեմալական ռեժիմի հաստատումից հետո թուրքական և ոչ մի հյուպատոսություն հայերին թուրքիա վերադառնալու իրավունք չի ընձեռել», իրավախորհրդատուները նշել են, որ «հայերին իրենց քաղաքացիությունից զրկելը, որը վնասեց արտասահմանում գտնվող համարյա բոլոր հայերին, քրեական պատժի բնույթ է կրում»:

Թուրքական կառավարության այն պնդման կապակցությամբ, թե քաղաքացիությանը վերաբերող բոլոր հարցերով օրենքների հրապարակումը պետության ինքնիշխան իրավունքն է, իրավախորհրդատուները, վկայակոչելով Միջազգային արդարադատության Մշտական պալատի 1923թ. փետրվարի 7-ի որոշումը Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի միջև քաղաքացիության վերաբերյալ դեկրետների մասին, մատնանշեցին, որ «պետու-

թյան սկզբունքորեն բացառիկ իրավասությունը սահմանափակվում է միջազգային իրավունքի նորմերով»:

Երկրորդ հարցի առաջին մասին նույնպես իրավախորհրդատուները բացասական պատասխան տվեցին, ելնելով նրանից, որ ոչ միջազգային իրավունքը, ոչ Լոզանի պայմանագիրը Թուրքիայի կառավարությանն իրավունք չեն տալիս բռնազավթել հայկական ունեցվածքը, որ բռնագրավումը հիմնավորելու համար թուրքական օրենքներում հաստատված տարեթվերը անհամատեղելի են իրավական տրամաբանությանը, քանզի բռնագրավման անօրինականությունը չի կարող կապ ունենալ որևիցե մի տարեթվի հետ:

Իրավախորհրդատուները ելնում էին այն բանից, որ եթե միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքները պաշտպանում են օտարերկրացիների սեփականությունը, դրանք առավել քան հիմնավորապես պիտի կիրառվեն պետության քաղաքացիներ հանդիսացող անձանց սեփականության պաշտպանման խնդրում:

Հաստատելով, որ հայերի ունեցվածքի խնդիրը շոշափող միջոցներն անհնար է դիտել որպես բռնագրավում քրեական իրավունքի հիման վրա, որովհետև «նման վարկածը բացարձակապես բացառվում է Դաշնակից տերությունների և Թուրքիայի համաձայնությամբ», իրավախորհրդատուները մատնացույց արեցին, որ դրանից հետևում է «թուրքական կառավարությանը հայերի ունեցվածքը զավթել թույլատրելը, ինչը հանդիսանում է նույնիսկ չքողարկված, այլ բացահայտ և ուղղակի բռնագրավում, կնշանակել հրաժարումն ընդունված պարտավորություններից և մարդասիրության պարտքից»:

Հարցի առաջին մասի բացասական պատասխանը կանխորոշեց դրական պատասխանը երկրորդ մասին. բռնազավթման իրավաբանական ոչնչությունից հետևում է բռնազավթված սեփականությունը սեփականատիրոջը վերադարձնելու անհրաժեշտությունը: Իրավախորհրդատուները միանշանակ հայտարարեցին, քանի որ «Թուրքիայի կառավարությունը իրավունք չունի իրականացնել Թուրքիայից գաղթած հայազգի անձանց ունեցվածքի բռնագրավում, պարտավոր է իրականացնել դրա

ռեստիտուցիան»։ Դա է կանխատեսում իրավունքը բոլոր դիպրերում, երբ պահանջում է ունեզրկվածը։ Դա հանդիսանում է միջազգային ընդհանուր իրավունքի գործողության ռադակի հետևությունը. եթե իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան պետք է հարգվի սեփականությունը, ապա դա պետք է իրականանա «ուչ միայն արժեքային բնորոշմամբ, այլև առարկայորեն»։

Ի հաստատումն այդ դրույթի, իրավախորհրդատուները վկայակոչել էին միջազգային պրակտիկան. հաշտության պայմանագրերի մի ամբողջ շարքի համապատասխան հոդվածների համանման տեքստերը՝ Վերսալի 297 հոդվածը, Սեն-ժերմենի 249 հոդվածը, Նեյյի 117 հոդվածը, Տրիանոնի 232 հոդվածը։ Դրանցով նախատեսվում էր, որ բոլոր դեպքերում, երբ Դաշնակից կամ Միացած որևիցե տերությունից ելած որևէ անձ, որը հանդիսանում է սեփականատերն ունեցվածքի, իրավունքների կամ շահերի, որոնք դեռևս նախքան հաշտության պայմանագրերը հակառակորդի տարածքում դարձել են տնօրինման ձեռնարկումների օբյեկտ, ցանկություն հայտնելու պարագայում իր պահանջի բավարարումը կամ ռեստիտուցիան կատանա այն դեպքերում, երբ ունեցվածքը գոյություն ունի առարկայորեն։

Ավելի ընդհանուր տեսքով երրորդ հարցը (ինչպես վերաձևակերպել էին իրենք՝ իրավախորհրդատուները) Միջազգային արդարադատության Մշտական պալատի իրավասության ընդունմանն էր հանգում. կարո՞ղ էր, արդյոք, իսկ եթե՝ այո, ապա ի՞նչ պայմաններում, քննել հայերի՝ լքյալ հայտարարված ունեցվածքի մասին հարցը։

Իր Օրինադրության 86 հոդվածով պալատի իրավասությունը տարածվում էր բոլոր վեճերի վրա, որոնք հարուցում էին կողմերը և գործող պայմանագրերով ու համաձայնագրերով հատկապես նախատեսված դեպքերում։ Առաջին կարգն իմաստը կորցնում էր, քանի որ Հայաստանը բռնակցված էր, իսկ Թուրքիան, բնականաբար, չէր պատրաստվում հարցը քննել միջազգային դատարանում։ Սակայն իրավախորհրդատուների կարծիքով, երկրորդ կարգի տակ էին ընկնում Լոզանի պայմանագրի 37-43 հոդվածները։ Այդ պայմանագրի 44-րդ հոդվածի 3-

րդ կետն ուղղակիորեն նախատեսում էր, որ վիճելի հարցը պիտի տեղափոխվի Մշտական պալատի քննարկմանը, Լոզանի պայմանագրի Թուրքիայից տարբեր կողմի կամ ազգերի լիգայի անդամ-տերություններից որևէ մեկի պահանջով:

Իրավախորհրդատուները նորմատիվ նյութ մեջբերեցին, որը հաստատում էր. դատարանի իրավասությունը ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության առումով հիմնված է միջազգային իրավունքի վրա: Իրավախորհրդատուները ցույց տվեցին նաև, որ սույն իրավասությունը տարածվում է իրավունքի կամ փաստի հարցերով վեճերի վրա: Վկայակոչեցին նաև Մշտական պալատի գործունեության մեջ նմանօրինակ գործերով նախադեպեր:

Չխորանալով հայերի տարագրման պատճառների մեջ, իրավախորհրդատուները հաստատեցին, որ դա «թուրքական կառավարությանն իրավունք չի տալիս բռնազավթել նրանց ունեցվածքն այն պատրվակով, թե ներկայումս նրանք Թուրքիայի բնակիչներ չեն»:

Երրորդ հարցի վերաբերյալ իրավախորհրդատուների ձևակերպված եզրակացությունը բխում էր նրանից, որ Թուրքիայի կառավարությունը չի կարող վկայակոչել անձանց «քացակայությունը» երկրից, որոնց ինքը թույլ չի տալիս վերադառնալ: Այդ իսկ պատճառով Թուրքիայից ելած հայազգի անձինք, որոնք ուրիշ քաղաքացիություն չէին ստացել, հիմքեր ունեն օգտուվելու Լոզանի պայմանագրի 37-44 հոդվածների պաշտպանությունից, որպես Թուրքիայում ոչ մահմեդական փոքրամասնության անդամներ: Նշված հոդվածների կապակցությամբ իրավունքի կամ փաստի բոլոր հարցերում Թուրքիայի կառավարության և Լոզանի պայմանագրի որևիցե այլ անդամ-պետության կամ Ազգերի լիգայի Խորհրդի ցանկացած այլ անդամ-պետության միջև տարակարծությունների դեպքում, այդ պայմանագրի 44-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, դրանք պիտի դիտվեն որպես միջազգային բնույթի վեճ, ըստ Ազգերի լիգայի Համաձայնագրի 14-րդ հոդվածի դրույթների: Համապատասխանաբար, այդ վեճը կարող է հանձնվել Միջազգային արդարադատության Մշտական պալատի քննությանը, Թուրքիայի կառա-

վարության կարծիքը վիճարկող կողմի պահանջով:

Խորհրդատվական եզրակացությունն ըստ էության, տը-վեց տվյալ հարցում Թուրքիայի հակաօրինական քաղաքակա-նության իրավաբանական գնահատականը: Եզրակացությունն ուղղված էր նաև արևմտյան տերություններին, որոնք հայկա-կան հարցի լուծումը ենթարկել էին իրենց քաղաքական շահերին և Ազգերի լիգայում քննարկումը փակուղի մտցրել:

Չնայած Օսմանյան կայսրության սահմաններում ցեղա-սպանության գոհ դարձած հայերի սեփականության իրավունք-ների պաշտպանության մասին հարցի իրավաբանական հիմնա-վորվածությանը և հարցադրման սուր ուղղվածությանը, Լոզանի պայմանագրի արևմտյան մասնակից-տերությունները և Ազգերի լիգայի Խորհրդի անդամները չօգտվեցին հայերի ունեցվածքա-յին իրավունքների պաշտպանության համար եղած հնարավո-րություններից:

ՀԱՐՑԻ ԼՈՒԾՈՒՄԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔՆ Է

Տեղասպանությունից ճզմված, աշխարհով մեկ սփռված, միջազգային իրավունքի սուբյեկտ լինելուց զրկված հայ ժողո-վուրդն այլևս չէր կարող հարցը շրջել դեպի ճշմարիտ հարթու-թյուն, հասնել դրա լուծմանը միջազգային իրավունքի հիման վրա: Միջազգային իրավունքի շրջանակներում և պետական մակարդակով ցեղասպանության հանցագործությունների հա-մար նյութական պատասխանատվության հարցը բարձրացնելու հնարավորությունը երևան եկավ միայն յոթանասուն տարի անց, Հայաստանի՝ միջազգային իրավունքի սուբյեկտ լինելու վերա-կանգնումից հետո:

Այդ հարցը կարող է և պետք է լուծվի հայ-թուրքական հարաբերությունների ընդհանուր նորմալացման շրջանակնե-րում, միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի հիման վրա:

Հայ-թուրքական հարաբերությունների ողբերգական ան-ցյալի քաղաքակիրթ եղանակով հանգուցալուծումն առնիլյակն ենթադրում է ունեցվածքը վերադարձնելը կամ վնասի դրամա-

կան փոխհատուցումը ցեղասպանության գոհերին կամ նրանց ժառանգներին: Խոսք կարող է լինել ունեցվածքի վերադարձման կամ վնասի դրամական փոխհատուցման մասին, վնաս, որ հասցրվել է ոչ միայն ազգային խմբի անդամներին, այլև ցեղասպանության օբյեկտ դարձած ազգային ամբողջ խմբին: Ֆիզիկական անձանց իրավունքների վերականգնումն այդ հանցագործության նյութական պատասխանատվության տարրերից մեկն է, սակայն անհնարաբար տարրը: Իսկ նյութական պատասխանատվության հիմնական տարրը հանդիսանում է ցեղասպանության՝ որպես խմբի հանդեպ ոտնձգության հետևանքների վերացումը, տնտեսական անհրաժեշտ պայմանների ստեղծումն այդ խմբի հնարավորին չափ շուտափույթ և կատարյալ վերականգնման համար: Այդ իսկ պատճառով ամեն ինչ հանգեցնել խմբի անդամների կամ նույնիսկ ամբողջ խմբին ունեցվածքային վնասի փոխհատուցմանը, կնշանակեր հիմնական հարցը նենգափոխել երկրորդականով, և, ըստ էության, գործը հանգեցնել ցեղասպանության անպատժելիության, պատասխանատվության չարդարացված մեղմման: Նման գործարքը համարժեք կլիներ մարդկանց տառապանքների և կյանքի արժեքային գնահատման, իրենից, ըստ էության, կներկայացներ «փրկագին» մի ամբողջ ժողովրդի իրավունքների ոտնահարման դիմաց, կաշառք մարդկության դեմ կատարած հանցագործության անպատժելիության համար: Էրա մեջ է նմանօրինակ գործարքի անբարոյությունը և նույնիսկ հակաօրինականությունը, եթե դա կատարվում է քաղաքական և իրավական պատասխանատվության շրջանակներից դուրս, և ոչ որպես հանցագործության հետևանքների վերացման բաղկացուցիչ մաս, ոչ որպես նոր փոխհարաբերությունների կառուցման պայման:

Հայերի ունեցվածքը յուրացնելու համար թուրքերին՝ որպես ֆիզիկական անձանց նյութական պատասխանատվության ենթարկելը գործնականորեն անհնար է. հայերին կողոպտելով, ինչպես և սպանելով զբաղվել է ամբողջ թուրք ազգաբնակչությունը, կառավարության գիտությամբ և թողտվությամբ: Ուստիև պատասխանատվություն պետք է կրի ամբողջ ազգը՝ ի դեմս պետության:

Տեղասպանության հանցանք գործելու համար ընդհանուր պատասխանատվության շրջանակներում թուրքական կառավարությունը պետք է նյութական պատասխանատվություն կրի հայերի՝ որպես ֆիզիկական անձանց, և որպես այսպիսին ամբողջ ազգային խմբի հայ ժողովրդի կողոպտման, հավասարապես նաև հասցված վնասի համար:

Թուրքական պետության նյութական պատասխանատվության իրականացման համար հենց այդ պետության հաշվին պետք է ստեղծվի միջազգային հանձնաժողով, որի պարտականությունների մեջ կմտնի հողային սեփականության, հայերից և հայ ժողովրդից զավթած շարժական և անշարժ կայքի ի հայտ բերումը: Հայերին պիտի ընձեռվի կողոպտած ունեցվածքի մասին տեղեկություններ ներկայացնելու երաշխավորված իրավունք:

Մասնավորապես, պիտի կարգավորվի թաքցրած գանձերի հարցը հայերով բնակեցված վիլայեթներում: Հարցը մտացածին չէ: Թիֆլիսյան տանն, ուր մանկությունն է անցկացրել տոդերիս հեղինակը, ապրող գաղթական ընտանիքներից մեկը՝ Ղարսից փախած Լևոնչերիսենք էին: Մինչև մահկանացուն կրկնելը, ծերունին բոլորին հարցնում էր, թե ե՞րբ կարող է գնալ Ղարս՝ իր գանձը հանելու, որի տեղը հայտնի էր ընտանիքին: Այդպիսի պահած գանձեր Թուրքիայի տարածքում քիչ չեն: Ճիշտ կլիներ, որ Թուրքիան հատուկ օրենքով հաստատեր թուրքական սահմաններում ապրած հայերի և նրանց ժառանգորդների իրավունքը հայերով բնակեցված վիլայեթներում հայտնաբերված այդ թաքստոցների վրա:

Հայերի ունեցած գումարները պետք է ի հայտ բերվեն նաև օտարերկրյա բանկերում նույն հիմունքներով և նույն ընթացակարգով, որոնք կիրառվում են հրեաների ցեղասպանության զոհ ավանդատուների՝ «քնած» կամ «մեռած» հաշիվների որոնման համար:

Ակնհայտ է, որ բանկային հաշիվներից բացի, պետք է ի հայտ բերվեն հայերի ապահովագրությունները, որոնց նկատմամբ միշտ հավակնություն է ունեցել թուրքական կառավարությունը: Ելնելով այն բանից, որ ապահովագրվածների մահը

կամ նրանց ունեցվածքի կորուստն արդյունք են թուրքական պետության կատարած ցեղասպանության՝ որակված որպես հանցագործություն մարդկության դեմ, պայմանագրի պայմաններից կախված, դրանք պիտի դիտվեն որպես օրինական ապահովագրական դեպք, և ժառանգորդներին պետք է վճարվեն համապատասխան ապահովագրական գումարներ կամ ապահովագրական հատուցումներ, տասնամյակների ընթացքում աճած տոկոսներով, որպես պայմանագրով չնախատեսված դեպք այդ դեպքում ևս պիտի վերադարձվեն ապահովագրվածների ապահովագրական վճարումները: Դա են պահանջում իրավունքը և արդարությունը: Այն դեպքում, երբ ապահովագրական ընկերությունները դադարեցրել են իրենց գոյությունը, պատասխանատրվությունն իր վրա պիտի վերցնի պետությունը, որն ստանձնել է ապահովագրության ֆինանսական ապահովումը:

Հաշիվների, ապահովագրական վկայականների, շարժական և անշարժ կայքի ի հայտ բերված բոլոր տերերի անունները պիտի հրապարակվեն՝ ժառանգորդներն որոնելու համար: Չպահանջված միջոցները պետք է հանձնվեն հայերի ցեղասպանության զոհերի հատուկ հիմնադրամին:

Նշված ձեռնարկումները պիտի վերաբերեն ինչպես Թուրքիայի պետական սահմաններից ներս, այնպես էլ դրանից դուրս կատարած ցեղասպանության գործություններին, ներառյալ 1918-1920թ.թ. ներկայիս Ադրբեջանի տարածքում կատարված հանցագործությունները:

Թուրքիան պետք է վերանայի իր վերաբերմունքը հայկական ցեղասպանության նկատմամբ, մասնավորապես այդ հանցագործության զոհերի իրավունքների նկատմամբ: Պետք է ընդունի, որ տասնամյակներ ի վեր իր հարուցած արգելքներն անհամատեղելի են մարդու ամենատարրական իրավունքներին, իրավունքի և արդարության ամենահիմնական պատկերացումներին, անդամակցությանն այն միջազգային կազմակերպություններին, որոնց մասնակցում է և որոնց շարքն ուզում է ընդունվել:

Հայերի ցեղասպանությանն առնչվող Ազգերի լիգայում տեղությունները պիտի քավեն իրենց մեղքը, դրսևորելով

սկզբունքայնությունն Խայերի ցեղասպանության հանդեպ և մարդասիրություն՝ զոհերի նկատմամբ: ՆԱՀԽ, Եվրոպայի Խորհրդի և եվրոպական այլ կազմակերպությունների անդամությունները, որոնք Եվրոպայում նոր կարգի կառուցման նպատակ են հետապնդում, հնարավորություն ունեն ապացուցել աշխարհին, որ իսկապես հարգում են մարդկային քաղաքականության արժեքները, որ իրենց վերաբերմունքը իրավունքին և արդարությանը զերծ է երկակի ստանդարտներից: